զի անցցէ[1]) ընդ այն։ Այլ փեսայն աղաղակէր թէ Ի-բաւունս արա՛յ, և կինն թէ Ուրանամ և ընդ նմա ոչ լինիմ. և կաշառս խոստացան տալ թէ Մի՛ լիցի։ Եւ իբրև ոչ հնազանդեցան, բանադրեաց զնոսա դատերովն ի մէջ ատենի և յամենայն եկեղեցոյ։

Եւ ոմն մղտեսի ծեր Կալաշ անուն երկու ամուսնացեալ և զերեքն խնդրեաց և ետ ի զուռուշ զի ի-բիցով առցէ կին։ Եւ Կիրակոս ոմն մղտեսի նոյնպէս. և ոչ ետ հրաման, և երթեալ նոքա քէպլինով արարին։

Դարձցուք այժմ և յարքունիսն թէ զի՛նչ գործեցաւ։ Յորժամ էրն յՈւսկիւտարն (վէզիրն) և ետ զօլօֆէն և ել անտի[2]) յետ ոչ շատ աւուրց պայրամին, սակաւ սակաւ երթայր յԻզնիմիտ և ոլորեալ այն ճանապարհաւ՝ զբազում արս անդ սպանանէր, զոր դեռ ևս բերէին յԱնատօլոյ՝ պատճառելով թէ ընդ ապստամբս էին։ Եւ նա անյագ էր ի տեսանել զարիւն պարտաւորաց և անպարտից։ Եւ գնաց յորժամ ի Պուրսայ, անդ ևս սպանանէր անթիւ՝ զեղբայր եղբարքք, զհայր որդովք, և ոչ պատմի խղճութիւն նոցա։ Եւ անդ աբար զհաճիլար պայրամն իւրեանց։ Որոց զկնի ելեալ գնաց Եղիազար վարդապետն՝ աստ տվեալ ընծայ և անդ ևս, և հոգայր ընդ քէհեային վէզիրի։ Եւ մինչդեռ անդ էր, նա՛յ ելեալ Վարդապետն և մեք ընդ նմա գնացաք ԺԲ[3]) Յուլիսի երրորդում աւուր Վարդավառին՝ սակս պարաթի փէշքէշին և վասն եկեղեցոյն Սուրբ Սարգսի։ Ժե աւուրքք կացեալ անդ և ոչ եղև հնար, բայց կամք էր քէհեային։ Եւ դեռ ևս մեք անդ էաք՝ եղև հրաման յարքայէ որ հաճեցաւ զկամս վէզիրի, զի ետ զՍուրբ Յակոբ վիճակն մեր ի մեզ։

1) անցէ. 2) անի. 3) ԺԳ.